ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/06.2.2/173

«08» «01» 2024

«Եդեմ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արմեն Հովհաննիսյանին

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Եդեմ գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Կապալառուի կողմից աշխատանքների կատարման ժամկետի էական խախտումները և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն նախաձեռնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

- որակավորման ապահովման գումարը՝ 10174200 (տասը միլիոն հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամը փոխանցել ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900008000698 գանձապետական հաշվին,
- Պայմանագրի ապահովման գումարը՝ 6236994 (վեց միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր իննսունչորս, հաշվարկը՝ 67828000-5458056)x10%)) ՀՀ դրամը և Պայմանագրի 6.2 կետով նախատեսված և հաշվարկված տուգանքի գումարը՝ 311850 (երեք հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր հիսուն, հաշվարկը՝ 67828000-5458056)x0.5%)) ՀՀ դրամի չափով, ընդհանուր գումարը՝ 6548844 (վեց միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը փոխանցել ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900008000664 գանձապետական հաշվին,
- վճարման անդորրագրերը ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն կամ դրանք տրամադրել gnumner@env.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

Ընդունել ի գիտություն, որ վերոնշյալ ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովման գումարները չմուծելու դեպքում կիրառվելու է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ:

1/8/2024

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Սերգո Աթանեսյան

Ֆինանսատնտեսական վարչության
Ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Տաթևիկ Մեհրաբյան 011 818 529

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրի լուծման մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի լուծման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Լուծման պատճառ՝	Կապալառուն խախտել է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով աշխատանքի կատարման համար նախատեսված ժամկետները:
Լուծման նկարագրությունը և հիմքը՝	Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը, քանի որ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Տաթևիկ Մեհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ gnumner@env.am**:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**